ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2017թ. սեպտեմբերի 13 **N 170-Ա**

ԱՇՏԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ 1990-1999ԹԹ. ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԸ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 17-րդ հոդվածների պահանջներով Աշտարակի զորակոչային տեղամասում 2018 թվականի առաջին զորակոչը կազմակերպված անցկացնելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1. Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարին՝

1) 2017 թվականի սեպտեմբերի 15-ից սկսել 1990-1999թթ. ծնված քաղաքացիների զորակոչի բժշկական հանձնաժողովի աշխատանքները և անցկացնել 1990-1999թթ. ծնված քաղաքացիների զորակոչը,

2) զորակոչել արական սեռի այն զորակոչիկներին, որոնց 18 տարին լրանում է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիներին, որոնց նախկինում տրված տարկետման ժամկետները լրացել են:

2. Հաստատել՝

1) զորակոչային հանձնաժողովի կազմը համաձայն N 1 հավելվածի,

2) զորակոչիկների բժշկական ստուգումներն անցկացնող հանձնաժողովի կազմը համաձայն N 2 հավելվածի,

3) զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական ապրելակերպի պայմաններին ծանոթանալու համար ստեղծված հանձնաժողովի կազմը համաձայն N 3 հավելվածի,

ա. հանձնաժողովի կողմից կազմված ակտերը ներկայացնել Արագածոտնի մարզային զորակոչային հանձնաժողովի հաստատմանը:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության

վարչության պետին՝

1) ապահովել բժշկական հանձնաժողովի բոլոր անդամների պարտադիր ներկայությունը զորակոչային հանձնաժողովի աշխատանքներին,

2) բժշկական ստուգման և զորակոչի օրերին զորակոչային և բժշկական հանձնաժողովի անդամներին ազատել իրենց աշխատանքային պարտականություններից:

4. <<Աշտարակի բժշկական կենտրոն>> ՓԲԸ գործադիր տնօրենին՝

1) կազմակերպված անցկացնել զորակոչի ենթակա բոլոր զորակոչիկների արյան խմբերի և ռեզուս-ֆակտորի որոշումը, արյան, մեզի անալիզները և մնացած անհրաժեշտ հետազոտությունները,

2) ժամանակին կազմակերպել այն զորակոչիկների բուժումը, որոնք զորակոչային հանձնաժողովի կողմից ուղարկվել են բուժման,

3) հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ գույքով, հատուկ բժշկական սարքավորումներով, դեղորայքով,

4) զինկոմիսարիատի հայտով հատկացնել մեկ սանիտարական մեքենա՝ զորակոչիկներին Հանրապետական հավաքակայան տեղափոխելու համար:

5. Աշտարակի տարածաշրջանի համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին՝

1) օժանդակել զորակոչիկների ժամանակին ներկայանալուն զինկոմիսարիատ՝ համաձայն զինկոմիսարիատի ներկայացրած չվացուցակի և անհատական ծանուցագրերի:

6. Բոլոր համայնքների ղեկավարներին՝ զորակոչից առաջ զինկոմիսարիատի հետ միասին մանրամասն ճշտել զորակոչիկների տվյալները:

7. Հանձնարարել Աշտարակի ոստիկանության բաժնին՝

1) ապահովել հասարակական կարգի պահպանումը զորակոչի տեղամասում,

2) զինկոմիսարիատից ստացված տվյալների հիման վրա կազմակերպել այն անձանց որոնումները, որոնք խուսափում են ներկայանալ զորակոչային տեղամաս:

8. Սույն կարգադրության կատարման պատասխանատվությունը դնել Աշտարակի զինվորական կոմիսար, գնդապետ Մ.Ղազարյանի վրա:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2017թ. սեպտեմբերի 13 -ի
N 170-Ա կարգադրության

Կ Ա Զ Մ Ը

Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարիատի 2018 թվականի առաջին զորակոչային հանձնաժողովի

Մ.ՂԱԶԱՐՅԱՆ - Աշտարակի տարածքային զինվորական կոմիսար, գնդապետ, հանձնաժողովի նախագահ

Ա.ՏԵՐ-ՄԱՐԳԱՐՅԱՆ - Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի բաժնի պետի տեղակալ, ոստիկանության մայոր

Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - հանձնաժողովի ավագ բժիշկ

Ե.ՂՈՒԿԱՍՅԱՆ - հանձնաժողովի քարտուղար

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2017թ. սեպտեմբերի 13-ի
N 170-Ա կարգադրության

Կ Ա Զ Մ Ը

Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարիատի 2018 թվականի առաջին զորակոչային բժշկական հանձնաժողովի

Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	-	թերապևտ, ավագ բժիշկ
Ն.ՄԱՆՎԵԼՅԱՆ	-	մաշկավեներոլոգ
Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ	-	վիրաբույժ
Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	-	նյարդաբան
Ս.ՄԻՐԶՈՅԱՆ	-	ակնաբույժ
Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆ	-	քիթ-կոկորդ–ականջ
Ա.ՃԱՆՃԱՊԱՆՅԱՆ	-	սրտաբան
Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	-	հոգեբույժ
Մ.ԱՎԵՏԻՍՅԱՆ	-	բուժքույր

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2017թ. սեպտեմբերի 13-ի
N 170-Ա կարգադրության

Կ Ա Զ Մ Ը

Զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական ապրելակերպի պայմաններին ծանոթանալու հանձնաժողովի

Վ.ԱՍԱՏՐՅԱՆ - Աշտարակի զինկոմիսարիատի զորակոչային բաժանմունքի պետ, մայոր, հանձնաժողովի նախագահ

Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ – Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

համայնքների ղեկավարներ - ըստ բնակավայրերի /համաձայնությամբ/

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ